ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Արմավիրի մարզ, Բաղրամյան համայնք,
Բաղրամյան 2/3, Հեռ. (0233) 22250
baghramyanhamaynqapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 փետրվար 2023 թվականի N 142

«ՖԱՐՏՈ ՇԻՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բաղրամյան համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 01/23 վարչական գործը՝ Բաղրամյան համայնքում «Ֆարտո Շին» ՍՊԸ-ի կողմից վարձակալված 04-029-0101-0001 ծածկագրի 3,3 հա և 04-029-0101-0002 ծածկագրի 1,4247 հա հողատարածքների օգտագործման վերաբերյալ , պարզեց , որ «Ֆարտո Շին» ՍՊԸ-ի կողմից իրականացվել է հողատարածքի ոչ նպատակային օգտագործմամբ գործունեություն, որի համար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով 2023 թվականի փետրվարի 17-ին Բաղրամյանի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ վարչական տույժ կիրառելու հարցի քննության նպատակով:

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 244^9 հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, 305-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 26-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով վարչական իրավախախտման վերաբերյալ 2023 թվականի փետրվարի 17-ի թիվ 01 և վարչական

վարույթի գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ 2023 թվականի փետրվարի 22-ի թիվ 02 արձանագրությունները, Բաղրամյանի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի ընթացքում բացահայտված գործի բոլոր հանգամանքները, հաստատված համարելով «Ֆարտո Շին» ՍՊԸ-ի կողմից հողատարածքը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու փաստը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Ֆարտո Շին» ՍՊԸ – ի /տնօրեն Բաբկեն Գարոյան/ նկատմամբ հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու համար կիրառել վարչական տույժ՝ նշանակելով տուգանք՝ 100000 / Մեկ հարյուր հազար / ՀՀ դրամ:

2. Տուգանքը պետք է վճարվի սույն որոշումն իրավախախտում կատարած անձի կողմից իրազեկվելուց ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում Բաղրամյանի համայնքապետարանի 900475054145 գանձապետական հաշվեհամարին:

3. «Ֆարտո Շին» ՍՊԸ-ին /տնօրեն Բաբկեն Գարոյան/ միջոցներ ձեռնարկել հայտնաբերված խախտումները վերացնելու՝ հողամասի օգտագործման նպատակային նշանակությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոփոխելու ուղղությամբ:

4. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունը վերապահել Բաղրամյան համայնքի ղեկավարի տեղակալ Հովնան Ավետիսյանին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Ֆարտո Շին» ՍՊԸ-ին իրազեկմանը հաջորդող օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Շ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2023 թվականի փետրվարի 23

Բաղրամյան համայնք

Սույնս իմ օրինակն է
24.02.2023